«Պետական արարողակարգի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական արարողակարգի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-291-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում՝ հանել «բարձրաստիճան» բառը.

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

- 1-ին մասում «Բարձրաստիճան» բառը փոխարինել «Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված» բառերով.
- 2-րդ մասում «Գործադիր իշխանության» բառերը փոխարինել «Պետական կառավարման համակարգի» բառերով և հանել «բարձրաստիճան» բառը.

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: